Խէր անիծից, էսաց.—Անմախ ըլնիս, անժառանգ։

Աստուած լսաւ, կատարից,—անմախ մնաց, անժառանգ։

Էլան, դարձան ուրանց տուն. կերան, խման, ուրանց քէֆ էրին։ Հադրբեջանայ թագաւուրու աղջիկ փսակից վեար Մհերին. եօթ օր, եօթ գիշիր խարանիս էրին, կերան, խման։

Մհեր էլաւ, առից զիւր կնիկ, կինաց Հադրբեջանայ քեաղաքէ էլաւ թագաւուր։

Մնաց Դաւիթ զինք ուր կնիկ*)։

Էսաց.—Կնիկ, տղէս փսակիցը, ճամբէսիցը Հադրբեջան թագաւուրութին. դիւշման չ'մնաց, ինչ իմ թուր չ'կտրից. տեղ չ'մնաց, ինչ իմ ձեռ, վուտ չ'դէպաւ. իլի մէ պղինձ ջիւր տաքցըցու, ինձը լեողկացըցու, իմ մէջ կ'ցաւը (մէջաց էրակ տղէն կտրիր էր)։

Դաւիթ էլաւ, կինաց, ուր շուրիր էխան, տը լեողկանայ. կնիկ իրիշկից՝ էնուր խաչ, ինչ թիւին, սիւցիր էր։

Կնիկ էլաց, դժարացաւ։

Դաւիթ էսաց.—Կնիկ, ի՞նչու դժարացար, լացիր։

Էսաց.—Մսէ խաչ վեար քիւ թիւին սիւցիր ի։

Էսաց.—Կնիկ, իս յերտիւմակուտուր իմ իլի, յերտիւմ կերիր իմ խատ Բանայ խանըմին, տ'երթամ կռիւ, չիմ կեացի. եօթ աւուր վերայ տ'երթէր, էս էլաւ եօթ տարի, նուր միտ ինկաւ։

Էն սհաթին էլաւ, զՔիւռիկ-Ջալալին խեծաւ, զթուր կէծակին կապից, կինաց. կինաց Բեանդիւմահին, խասաւ Բանայ խանըմին։

---

*) Ա. վարիանտի մէջ պատմուած է Դաւիթի կռիւը Մուսուլայ թագաւորի հետ. Դաւիթի Գիւրջիստանից վերադառնալուց յետոյ՝ մարդ է ուղարկում և կռիւ է պահանջում։ Դաւիթ երդւում է եօթ օրից յետոյ կռիւ գնալ։ Բայց եօթ օրը եօթ տարի է դառնում։ Այստեղ էլ հանգամանքները միևնոյն են, միայն Դաւթին սպանում է Զմշկիկ-Սուլթանը։ Դաւթի որդին՝ Մհերը վրէժ է առնում Մուսուլայ թագաւորից և Զմշկիկ-Սուլթանի վերայ «կազեաղ» լցնելով այրում է։